



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
«ԱՐԿԵՆԿԱ» ԿՈՒՆԿԵՐԱԿԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ Ժ/Պ



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 33

Ձեռնարկողը՝

«ՎԻՆԵԿԱ» ՍՊԸ
Ք. Երևան, Զաքյան 5

Գործունեությունը՝

**Մարգարայի ավազի հանքավայրի «Արևմտյան 1-ին»
տեղամասի ընդլայնման աշխատանքների շրջակա
միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվեկշիռություն**
«Արմավիրի մարզ»

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ
տնօրեն՝



Ստյոպա
Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 33

«17» 04 2018թ.

ՀՀ Արմավիրի մարզի Մարգարայի ավազի հանքավայրի <<Արևմտյան 1-ին>> տեղամասի ընդլայնման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«ՎԻՆԵԿԱ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	«Ա»
Տեղադրման վայրը՝	ՀՀ Արմավիրի մարզ, Մարգարա համայնք

Հանքավայրը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի Մարգարա համայնքում: Հանքավայրերը Երևան քաղաքի հետ կապված են 40կմ երկարությամբ ավտոմայրուղիով: Մոտակա բնակավայրերն են Արմավիր և Էջմիածին քաղաքները, Մարգարա, Գրիբոյեդովո և այլ համայնքները: Տեղամասը գտնվում է 835-840մ բացարձակ բարձրության նիշերի վրա:

ՀՀ Արմավիրի մարզի Մարգարայի ավազի հանքավայրի Արևմտյան 1-ին տեղամասի ավազի հանքավայրը կապված է Արաքս գետի ժամանակակից ողողահունային նստվածքների հետ և հանդիսանում է գետաողողատային տիպի հանքավայր:

Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են ժամանակակից դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումները և ալյուվիալ ավազային նստվածքները, ինչպես նաև Արարատյան դաշտավայրի ստորին լճային դարավանդի վերին չորրորդականի կավային առաջացումները: Մարգարայի ավազի բացահանքի տարեկան արտադրողականությունը ըստ ավազի զանգվածի կազմում է 35.000մ³:

Օգտակար հանածոյի միջին հզորությունը կազմում է 3.49մ: Այս երկու հանքավայրերի ստատիկ պաշարները միասին կկազմեն 222.14 հազ.մ³/տարի, որից 56.14 հազ.մ³/տարի, <<Արևմտյան 1-ին>> տեղամասինն է:

ՀՀ Արմավիրի մարզի Մարգարայի ավազի հանքավայրի <Արևմտյան 1-ին> տեղամասի պաշարները հաստատվել են Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի օգտակար հանածոների պաշարների գործակալության պետական ընդերքարանձակային փորձաքննության հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 8 եզրակացության, 2016 թվականի ապրիլի 1-ի դրությամբ, Շ կարգով-56.14 հազ.մ³/տարի քանակով, վերականգնման 1 միավոր գործակցով:



Նախագծով բացահանքերի օտարման տարածքը կազմում է 5.76հա, որից 1.61 հա կազմում է Արևմտյան 1-ին տեղամասը: Հանքավայրի լեռնատեխնիկական պայմանները և օգտակար հանածոյի փոքր հզորությունը հնարավորություն են տալիս ընդունել մշակման բաց եղանակ: Հանքավայրի շահագործման ժամանակ ընդունված է ընդլայնական ընթացքաշերտերով միակողմանի մշակման համակարգ:

Ելնելով հանքավայրի տեղադրման լեռնաերկրաբանական պայմաններից նախագծում ընդունված են բացահանքի ընդլայնված տեղամասի հետևյալ պարամետրերը.

- Երկարությունը - 300մ:

Լայնությունը-42-71մ, միջինը՝ 57մ:

- մակերեսը - 16098մ²

- Օգտակար հանածոյի հզորությունը- 3.0-4.2մ, միջինը՝ 3.49մ

<Արևմտյան 1-ին> տեղամասում մարվող պաշարները ըստ ավազի զանգվածի կազմում են տարեկան 35000մ³: Ելնելով բացահանքի վերջնական եզրագծից և կողային բնամասերում ու հատակում թողնվող համապատասխանաբար 9055մ³(4.07%) և 4650մ³(2.1%) կորուստներից, ընդամենը կորուստները կկազմեն 13705մ³(6.17%):

Բացահանքը ծածկող ժամանակակից առաջացումները /մակաբացման ապարները/ բացակայում են:

Լեռնային աշխատանքների կազմակերպման և ավազների արդյունահանումն իրագործելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ աշխատանքները.

1. Մոտեցող բնահողային ավտոճանապարհների կարգաբերում-1300մ²

2. Դրենաժային (ցամաքեցման) առվի կառուցում բացահանքի հարավ-արևելյան մասից միջինը 525մ³:

3. Արդյունաբերական հրապարակի կարգաբերում-220մ²:

Յուրաքանչյուր տարի, սեզոնի սկզբում անհրաժեշտ է կատարել հետևյալ լեռնանախապատրաստական աշխատանքները.

- Բացահանքի ջրհեռացման առվի կառուցում յուրաքանչյուր տարի բացահանքի հարավ-արևելյան մասից:

- Օգտակար հաստաշերտի մակերևույթին տրանսպորտային սարքավորումների և էքսկավատորի շարժման ուղեծրով ՊԵՋ-32 մակնիշի փոխադրվող երկաթբետոնե տիպային սալիկների տեղադրում:

Բացահանքի հիմնական տեխնոլոգիական սարքավորումներն են.

- էքսկավատոր-ՅՕ-5111EXL:

- Բուլդոզեր-Դ3-170:

- Ավտոինքնաթափ-ԿրԱ3-256Ե:

Բացահանքի ջրամատակարարումը կատարվում է արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, մոտեցող ավտոճանապարհը ջրելու համար տեխնիկական ջրով ապահովելու համար:

Խմելու ջուրը բերվում է ԿԵ-1.2 մակնիշի կցովի ջրի ցիստեռնով: Բացահանքում խմելու ջրով բանվորներին ապահովում են անհատական տափաշներից: Տեխնիկական ջուր պահանջվում է բացահանքի սահմաններից դուրս ավտոճանապարհների ջրման համար: Ավտոճանապարհների ջրումը կատարվում է ԿՕ-002 ջրցան լվացվող ավտոմեքենայով: Կենցաղային կեղտաջրերը օրական լցված են բետոնային լցարան ,որտեղից պարբերաբար տեղափոխվում են մոտակա մաքրման կայան:

Ավազի արդյունահանման աշխատանքները կատարվում է դեպի ներքև շերտի ման եղանակով, 1.0մ³ շերտի տարողությամբ դրագլայնով սարքավորված ՅՕ-5111EXL մակնիշի էքսկավատորով: Նախ կատարվում է օգտակար հանածոյի արդյունահանում և կուտակում օգտակար հաստաշերտի մակերևույթին առաստաղին՝ օգտակար հանածոյի ջրազրկման



նպատակով, որից հետո իրականացվելու է ջրագրկված օգտակար հանածոյի կույտի բարձումը:

ՅՕ-5111EXL դրագլայնի շերտիման խորությունը ծայրային անցման դեպքում կազմում է 10.0մ, որը լիովին բավարարում է օգտակար հաստաշերտը մեկ աստիճանով մշակելու համար:

Բացահանքը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի Մարգարա համայնքի տարածքում, որի սոցիալ-տնտեսական կյանքի զարգացմանն իր ներդրումը կունենա նաև ընկերությունը: Ընկերությանը իր պատրաստակամությունն է հայտնում պարբերաբար հանդիպելու համայնքի ղեկավարության հետ, քննարկելու անհրաժեշտ օգնության ցուցաբերելու համար:

Չանջարդյունահանման աշխատանքների անվտանգությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկական հրահանգի բոլոր պահանջները:

Տարածքում չեն հայտնաբերվել ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակներ: Մարգարայի ավազի հանքավայրի և ,Արևմտյան 1-ին մոտակայքում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացնում են վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան:

Բացահանքի լեռնատեխնիկական վերականգնումները իրականացվելու են բացահանքում արդյունահանման աշխատանքների լրիվ ավարտումից հետո:

Վերականգնվում են միայն արտադրական հրապարակը, ավտոճանապարհը: Վերականգնվող մակերեսը կազմում է 0.743 հա:

Նավթամթերքները պահվելու են բացահանքի արտադրական հրապարակում հատկացված տեղում: Վերջինիս հատակը բետոնապատվում է և տրվում համապատասխան թեքություն, որը կապահովի արտահոսված նավթամթերքի հոսքը դեպի այն հավաքող փոսը:

Նախատեսվում է աշխատակից-լիցքավորող, որը սահմանված կարգով բաց է թողնելու նավթամթերքները, միաժամանակ պատասխանատու է հակահրդեհային և նրանց հետ կապված բնապահպանական միջոցառումների համար: Բացահանքի շահագործման ընթացքում առաջանում են բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ, որոնցից են մեխանիզմներում փոխվող հնացած յուղերը և քսայուղերը, մաշված դետալների և մասերի նորոպ փոխարինման ժամանակ առաջացած մետաղական թափոնները /մետաղաջարդոնները/ և կենցաղային աղբը: Օգտագործված յուղերը և քսայուղերը հավաքվում են առանձին տարաների մեջ և հանձնվում է յուղերի և քսայուղերի երկրորդական վերամշակման կետին: Մաշված անվաղողերը, որոնց քանակը տարեկան 1 կոմպլեկտ է, հանձնվում է շահագրգիռ կազմակերպություններին: Չնամաշ մեխանիզմների դետալներն ու մասերը կուտակվելու են առանձին տեղում և հանձնվելու են, որպես մետաղի ջարդոն:

Կենցաղային աղբը տեղափոխվելու է մոտակա աղբահավաք կետեր:

Նախատեսվող աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրը աղտոտվածությունից զերծ պահելու նպատակով նախատեսվում է կիրառել բնապահպանական հետևյալ միջոցառումները.

-Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում:

-Փոշենատեցման նպատակով բացահանքի ճանապարհների ջրում: Լցակույտը և հանքախորշերը ջրելը անիմաստ է, քանի որ ջրերի կապիլյար բարձրացման հետևանքով հունամերձ ավազները նույնիսկ տարվա ամենաչոր ժամանակ (օգոստոսին) գտնվում են խոնավ վիճակում:

-Կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկվում է հատուկ ծառայության ուժերով:

-Խախտված հողատարածքների ռեկուլտիվացիա, որի նպատակով շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին կհատկացվի 472.0 հազ. դրամ գումար:



Մշտադիտարկումների բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 300.0 հազ. դրամ:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Այսպիսով՝ հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են ՀՀ բնապահպանության նախարարության ստորաբաժանումները:

Փորձաքննական պահանջներ

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ:

2. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, և այլն) մոնիթորինգ, կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակայնությանը: Անհրաժեշտության դեպքում նախատեսել շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ:

3. Առաջացած շինադրի (կենցաղային ադրի), հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<ՎԻՆԵԿԱ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Արմավիրի մարզի Մարգարայի ավազի հանքավայրի <Արևմտյան 1-ին> տեղամասի ընդլայնման արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ 



Հ. Մեսրոպյան